

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ, ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 1-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տ. Եղիշե ծ. վրդ. Կեզիրյանը: «Հայր մեր»-ից առաջ «Ցնծացէք և ուրախ լերուք, զի Աստուած ընդ մեզ է» բնաբանով քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 4-ին, չորեքշաբթի,—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում քննարկվում են Հայաստանյայց եկեղեցու առաքելության առաջընթացին վերաբերվող մի շարք հարցեր:

*
* *

Հուլիսի 5-ին, հինգշաբթի,—Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրովբայ.

Այսօր Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում Բաղդադից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տ. Օշական քհն. Գլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Օշակա՛ն, Օշակա՛ն, քանինե՞ր քեզ ուխտի եկան, ու դեռ քանինե՞ր պիտի գան» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ հայ մշակույթին նվիրյալ բոլոր երախտավորների, ինչպես նաև Վահան Ամատունի հայ ֆիլմի հիշատակին նվիրված:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ այցելեցին 150 իրաքահայեր՝ գլխավորությամբ տ. Օշական քհն. Գլըճյանի: Ուխտավորներին Վեհարանում ընդունեց Հայոց Հայրապետը և նրանց բաշխեց Իր օրհնությունները:

*
* *

Հուլիսի 8-ին, կիրակի,—Ե կիրակի զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի

վրա, ս. պատարագ է մատուցում ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տ. Ղևոնդ ծ. վրդ. Սամուրյանը: «Հայր մեր»-ից առաջ «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին» (Թարգմանչաց շարական) բնաբանով քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 14-ին, շաբաթ,—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Նույն օրը, ուշ երեկոյան, Կանադայից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Արիս եպս. Շիրվանյանը: Երևանի օդանավակայանում Սրբազան հորը դիմավորում են տ. Բագրատ աբդ. Գալստյանը և տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը:

*
* *

Հուլիսի 15-ին, կիրակի,—Զ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ոչինչ պիտոյ է դոցա երթալ, դուք տուք դոցա ուտել» (Մատթ. ԺԴ 16) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը ս. Գայանե վանքի տաճարում տեղի է ունենում քահանայական ձեռնադրություն:

Ս. պատարագի ընթացքում, «Ողջույն»-ից առաջ, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը քահանա է ձեռնադրում ճեմարանի նախկին ուսանող Խաչիկ սրկ. Ֆրանգյանին՝ վերանվանելով տ. Խաչատուր քահանա Ֆրանգյան:

*
* *

Հուլիսի 16-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան, Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը ութօրյա ուխտագնացության է մեկնում Հայաստանի մի շարք պատմական վանքեր և եկեղեցիներ. այդ թվում՝ ս. Տաթև, Հաղարծին, Գոշավանք, Մակարավանք և այլն:

Այդ առթիվ սրբազան հորը ուղեկցում Լիոն Վաչագան սրկ. Ավետիքյանը և Խաչիկ սրկ. Խարազյանը:

*
* *

Հուլիսի 17-ին, երեքշաբթի.—Այսօր Աթենքից Մայր Աթոռ վերադարձավ Մայր Աթոռի միաբան տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանը: Հայր սուրբը 1976 թվականի հունվարից գտնվում էր Աթենքում՝ տեղի աստվածաբանական համալսարանում ուսանելու համար:

*
* *

Հուլիսի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալփաքյանը:

Երևանի օդանավակայանում հայր սուրբին դիմավորում է տ. Կոմիտաս աբդ. Հովնանյանը:

*
* *

Հուլիսի 22-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Կանադայից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տ. Արիս եպս. Շիրվանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Դա է Որդի իմ սիրելի, դմա լուարուք» (Մարկ. Թ 6) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 23-ին, երկուշաբթի.—Բ օր Վարդավառի: Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա ս. պատարագ է մատուցում տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում մ՚րաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթին հրավիրված էր ԱՄՆ-ից ուխտավորաբար մայր հայրենիքում գտնըվող պրն. Տաճատ Թեղեմեզյանը, որը մասնակցած լինելով Վանի ինքնապաշտպանական կռիվներին՝ հուշեր պատմեց այդ մասին:

Վերջում հարգարժան պրն. Թեղեմեզյանը պատասխանեց միաբանների տված հարցերին:

*
* *

Հուլիսի 26-ին, հինգշաբթի.—Այսօր Լոնդոնից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Հայկազուն աբդ. Նաջարյանը:

*
* *

Հուլիսի 29-ին, կիրակի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ այցելեց Ֆրանսիայի պետական արտաքին դրամատան տնօրեն մեծահարգ տիար Ֆրանսուա Ժիսկար դ'Էստենը՝ նույն հաստատության երկու պատասխանատու ներկայացուցիչների հետ:

Մեծարգո հյուրերին ընդունեց Հայոց Հայրապետը Վեհարանի ընդունելության դահլիճում, ողջունեց և բարի գալուստ մաղթեց նրանց:

Այնուհետև ջերմ մթնոլորտում Հայոց Հայրապետի և հարգարժան ֆրանսիացի հյուրերի միջև տեղի ունեցավ արտագին զրույց: Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը խոսեց՝ վերջերս Ֆրանսիա կատարած հովվապետական Իր այցելության և այդ առթիվ Իր ունեցած հանդիպումների և զրույցների մասին ֆրանսիական եկեղեցական, պետական և քաղաքային իշխանությունների բազմաթիվ բարձրաստիճան անձնավորությունների, այդ թվում նաև Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նորին Վսեմություն Վալերի Ժիսկար դ'Էստենի հետ:

Զրույցի ընթացքում փոխանակվեցին հուշանվերներ:

Այնուհետև հարգարժան հյուրերը եկեղեցական թափորով Հայոց Հայրապետի հետ առաջնորդվեցին Մայր տաճար՝ ներկա լինելու ս. պատարագի արարողությանը:

Օրվա պատարագիչն էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալփաքյանը:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը Իր և Մայր Աթոռ ս. Էջմիածնի անունից ողջունեց և բարի գալուստ մաղթեց Ֆրանսուա Ժիսկար դ'Էստենին և նրան ուղեկցող բարձրաստիճան անձնավորություններին:

Ս. պատարագից հետո հարգարժան հյուրերը հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին՝ շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և ս. Էջմիածնի պատմական տաճարում պատարագի արարողությանը ներկա լինելու համար, և մեկնեցին լավագույն տպավորություններով:

Նույն օրը Հայոց Հայրապետը ընդունեց նաև ֆրանսիացի ուխտավորների մի մեծ խմբի՝ գլխավորությամբ կաթոլիկ հոգևորականների, որոնք նույնպես ներկա գըտնըվեցին սուրբ պատարագի արարողությանը:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Դամասկոսի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության, Հայ Երիտասարդաց Ընկերակցության Կրտսերաց բաժնի սաները՝ ղեկավարությամբ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալփաքյանի և Կրտսերաց բաժնի ատենապետ Վահե Շահինյանի:

Այդ օրը պատանի ուխտավորները նախ ներկա են գտնվում ս. պատարագի արարողությանը, ս. Հաղորդություն ստանում, այնուհետև պատարագից հետո նրանց Վեհարանում հայրաբար ընդունում է Ամենայն Հայոց Հայրապետը և բաշխում հայրապետական Իր օրհնությունները և հորդորները:

Վերջում պատանի հայորդիները Վեհափառ Հայրապետից աջահամբույրով նվերներ են ստանում:

*
* *

Հուլիսի 31-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը, հանգստյան տուն մեկնելուց առաջ, երիտասարդ միաբաններին տալիս է Իր հորդորները և օրհնությունը: